Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԻՍԿ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՏԵՐԱԶՄ ԷՐ

... Ախ այդ օրը, չարագույժ ու դաժան այդ օրը, մեզանից ով երբևէ կմոռանա 1941 թվականի հունիսի 22-ի կիրակին։ Ինչպես միշտ, այդ կիրակին էլ սկսվեց սովորականի պես՝ քաղաքում հորդաց կյանքը՝ աշխույժ, եռուն ու բաբախուն։ Տոնական հագնված մարդիկ դուրս եկան զբոսանքի, ընտանիքները շտապեցին քաղաքից դուրս՝ հանգստանալու, մայրերը՝ փոքրիկների թաթիկներից բռնած, ուղևորվեցին քաղաքի այգիներում զբոսնելու, լիառատ հորձանք տվեց իր արդար աշխատանքից գոհ մարդու ուրախ երջանկությունը։

Իսկ օրվա երկրորդ կեսն այնպես նման չէր առաջինին...

Ոչ, հաղորդարարի ձայնը չէր, որ ազդարարում էր սև ու զարհուրելի լուրը։ Դա սառեցնող մոխիր էր ասես, որ ցանում էին մեր կենսալից քաղաքի վրա։ Մարդիկ դարձան լուռ ու մտահոգ, դեմքերին սառեցին ժպիտները, ճակատներին հոգսաշատ կնճիռներ հայտնվեցին, խոսքերը դարձան չոր հրամաններ, խստությունը դարձավ մեր ամեն գործի հիմքն ու ակունքը։

Պատերազմը իր հետ բերեց իր դժնի փիլիսոփայությունը, որն արտահայտվում էր մեկ բառով միայն՝ «պետք է»։ Պետք է, որ մարդիկ աշխատեն տաս, տասներկու, տասներեք, գուցե և ավելի ժամեր, պետք է, որ սնունդն ու սննդամթերքը հասցվեն մինիմումի, պետք է, որ երեխաները մնան առանց հայրերի, մայրերն՝ առանց որդիների, քույրերն՝ առանց եղբայրների, պետք է, որ կանայք մոռանան իրենց քնքշությունն ու կանացիությունը և աշխատեն տղամարդկանց հավասար, երբեմն էլ՝ ավելի, պետք է, որ մեր կարկաչուն քաղաքում առժամանակ լռի երգն ու ծիծաղը, պետք է, որովհետև «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար»։

Այսպես մեր երջանկաշատ կյանքի մեջ ներխուժեց պատերազմը։ Ներխուժեց անկոչ ու ատելի հյուրի նման, ներխուժեց կոպիտ, բռնի, անողոքաբար տրորելով մեր

կյանքի ռոմանտիկան և ամեն ինչ ձևափոխելով ըստ իր դաժան պատկերի ու նմանության։

Սկսվեց Մեծ հայրենականը։

* * *

Պատերազմը մեր տուն մտավ քարտեզի կերպարանքով։ Հայրս գնեց «ՍՍՌՄ Եվրոպական մաս» մակագիրն ունեցող վիթխարի մի քարտեզ, ամրացրեց մեր սենյակի ամենաերևացող հատվածում, թերթերի օգնությամբ խնամքով ճշտեց ռազմաճակատի գիծը, և ապա նույնպիսի խնամքով կարմիր դրոշակիկներ ունեցող քորոցներ ամրացրեց վերից վար ձգվող ամբողջ ռազմաճակատի երկայնքով։

Այդ քարտեզը դարձավ մեր տան լուռ պաշտամունքը։ Ամեն առավոտ վերջին լուրերը Մոսկվայից հաղորդելուց դեռ շատ առաջ, բոլորս աճապարանքով հավաքվում էինք քարտեզի առջև։ Հավաքվում էինք գաղտնի հույսով ու թաքուն սպասելիքներով, որ կարմիր դրոշակիկները չեն նահանջի, գոնե կմնան իրենց տեղերում անշարժ, կամ գուցե, ով գիտի, նույնիսկ «առաջ» գնան։ Հայրս զգուշորեն միացնում էր ընդունիչը...

Սակայն պատերազմի սկզբնական շրջանի ռազմական ամփոփագրերը շատ էին անհոգի։ Գրեթե ամեն անգամ պատերազմական գործողությունների ընդհանուր բնութագրությունը մեկ-երկու ժլատ նախադասություններով տալուց հետո, հաջորդում էին այսպիսի դառն տողեր. «Թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ մեր զորքերը հետ քաշվեցին դեպի պաշտպանական նոր բնագծեր», կամ «Կատաղի մարտերից հետո մեր զորքերը թողեցին (թվարկվում էին մեկ կամ մի քանի քաղաքների անուններ) քաղաքները»...

Դա նշանակում էր, որ տատիկս պետք է շատացներ տնքտնքոցը՝ անեծքներ ուղարկելով «էն արնախումի» հասցեով, մայրս պետք է նորից ու նորից լսեր ամփոփագիրը՝ ինչ որ սփոփիչ կետեր գտնելու ակնկալիքով, իսկ հայրս, ամբողջովին մթնած, պետք է կարմիր դրոշակիկները տաներ հետ, այսինքն՝ Սովետական Միության խորքը, երկարատև ու մռայլ նայեր քարտեզին, ապա հարցներ բարձրաձայն, դիմելով բոլորիս և ոչ մեկին.

- Վերջը՞, ի՞նչ է լինելու սրա վերջը։

Իհարկե, հարցը մնում էր անպատասխան, և ոչ ոք այն ժամանակ չգիտեր, որ նմանատիպ հարցերին պատասխան տալու համար պահանջվելու են հինգ երկար ու ձիգ տարիներ։ Իսկ մինչ այդ՝ մարդիկ տանջվում էին անորոշության մեջ, քրքրվում էին ծագող բազում հարցերից ու տարակույսներից, «Մեծ առաջնորդը» իր սակավաթիվ ելույթներում այդ բնույթի հարցերին չգիտես ինչու չէր էլ անդրադառնում, իսկ թշնամին շարունակում էր առաջանալ ու առաջանալ...

«Դիրեկտորի տղա» լինելու հետևանքով ես ոչ միայն ազատ ելումուտ ունեի Մեխանիկական գործարանի բոլոր արտադրամասերը, այլև քիչ-շատ վերահասու էի նրա տեխնիկական կյանքին։ Գիտեի, որ գործարանը բոկսիտներ ստանում էր Մերձբալթիկայից, Կրիվոյ Ռոգից ստանում էր երկաթ, Մինսկից՝ չուգունի ձուլածոներ ու բարձրորակ թիթեղ, Դոնբասից «ոսկու գին ունեցող» ածուխ։ Իսկ գերմանացիները առաջանում էին անընդհատ, անողոք հաջորդականությամբ գրավելով գործարանին հումք մատակարարող քաղաքներն ու շրջանները, պատերազմի սկզբից շատ էլ չանցած՝ նրանց գերակշիռ մասը կարմիր դրոշակիկներից արդեն «այն» կողմն էին, իսկ դրա սարսափելի հետևանքները գործարանի համար շատ էլ դժվար չէր պատկերացնել։ Իրոք, ի՞նչ էր լինելու վերջը...

Պատերազմի սկիզբը շատ էր անմխիթարական։

* * *

Վեճը, որ ծայր առավ մեր տանը և տևեց մինչև ուշ երեկո, սկսվեց բոլորովին պատահաբար։ Մեր տուն էին եկել հորս ընկերները՝ տեղական արդյունաբերության ժողկոմ Գուրգեն Չոլախյանը (այժմ՝ «Միկրոէլեկտրոնիկա» գործարանի դիրեկտոր), Սպանդարյան պարտշրջկոմի առաջին քարտուղար Հաբեթ Դովլաթյանը (այժմ՝ Ալյումինի գործարանի դիրեկտոր), գործարանի մեխանիկական արտադրամասի պետ Վազգեն Խուբլարյանը (այժմ՝ Պետպլանի գլխավոր ինժեներ-մասնագետ), թարգմանիչ Վահե Միքայելյանը և էլի ուրիշներ։ Ինչպես և պետք էր սպասել, խոսակցության հիմնական թեման պատերազմն էր, իր բոլոր տխուր և մտահոգիչ հեռանկարներով։ Եվ ահա այդ իրադրության մեջ ռադիոն հանկարծ սկսեց նվագել հաղթական մի քայլերգ՝ պողպատե սառը փայլով կռիվ նետվող հարյուրավոր տանկերի, երկյուղից ծռմռված

դեմքերով խուճապահար փախչող թշնամու, նռնակների կապոցներով և զենքերի մի քանի տեսակները ձեռքին մարտադաշտ նետվող աստղակիր քաջարիների մասին։ Գիտեի, որ այդպիսի երգերը, մանավանդ վերջին շրջանում, բարկացնում էին հորս, իսկ այս դեպքում, մեր տան մռայլ խոսակցության ֆոնի վրա ռադիոյի երգն այնքան կոնտրաստային էր, որ ես իսկույն փոթորիկ կռահեցի։ Եվ այդպես էլ եղավ։

- Ո՞ւր են, ուր են այդ հարյուրավոր տանկերը, նռնակների կապոցները, զենքերի մի քանի տեսակները, – հայրս զգաց, որ գոռում է և փոքր-ինչ իջեցրեց ձայնը, – ինչու ամեն ինչ այսպես վատ ստացվեց, Գուրգեն Տիգրանովին։ Չէ՞ որ մենք ամենաուժեղն էինք, ամենաանհաղթն էինք, ամենակազմակերպվածն էինք, ամենա՝ ես ինչ գիտեմ ինչն էինք։ Իսկ հիմա պարզվում է, որ շատ բան այդպես չի եղել։ Ինչո՞ւ այսպես եղավ։

- Դե՛, զենքերը քիչ են, – զգույշ խոսեց Վահե Միքայելյանը։

- Ես էլ հենց այդ եմ հարցնում, ինչու էին զենքերը քիչ։ Կառավարությունը չգիտե՞ր, որ գերմանացին մեզ հետ կռվի է նախապատրաստվում, չգիտե՞ր, որ նրանք զինված են մինչև ատամները և զինված են նորագույն տեխնիկայով։ Ամբողջ աշխարհը գիտեր այդ մասին, ինչո՞ւ մերոնք չգիտեին։ Եվ որ կարևորն է, – հայրս արդեն խոսում էր բարձր ձայնով, – ինչո՞ւ մեզ տեղյակ չէր պահվում այդ մասին։ Ախր մենք տասնութ ժամ կաշխատեինք, քսան ժամ կաշխատեինք, գիշեր-ցերեկ կանեինք, որ չկանգնենք այս տխուր վիճակի առաջ։ Ասեք, բացատրեք ինձ։

Մի պահ լռություն տիրեց.

- Տեսեք, – հայրս առաջ մղեց «Սովետական Հայաստանի» թարմ համարը, – Գերմանացիք կռիվ են սկսել քսան տանկով, իսկ այստեղ, – հայրս շուռ տվեց թերթը, - ճակատ են նետել սկզբում տաս, հետո տասնհինգ տանկ։ Իսկ մենք, – հայրս խոսեց շշուկով, – դեպքեր են եղել, որ մեր զինվորները լրիվ սպառազինված անգամ չեն եղել։ Տեխնիկական հագեցվածության այսպիսի հարաբերության դեպքում, էլ ինչ խոսք կարող է լինել կարգին դիմադրություն ցույց տալու մասին։

- Թշնամու հարձակման անսպասելիությունն էլ չպետք է մոռանալ, – խոսեց Վազգեն Խուբլարյանը։

- Ինձ պակաս չի վրդովեցնում հենց այդ անսպասելիությունը, – հայրս նորից բարձրացրեց ձայնը, – պարզապես չեմ հասկանում։ Գերմանացիք սահմանին էին մոտեցրել երկու հարյուր դիվիզիա, և մերոնք ոչինչ չէին իմացել։ Պատկերացնում եք, երկու հարյուր դիվիզիա։ Դա նշանակում է մի քանի միլիոն հետևազորային, տասնյակ հազարավոր տանկեր, ավտոմեքենաներ, ինքնագնացներ, օդանավեր, հրանոթներ, ականանետներ և չգիտեմ էլ ինչ զենք ու զինամթերք։ Չեմ հաշվում օժանդակ զորամասերը՝ աշխատանքային գումարտակներ, բժշկական անձնակազմ, կապի ստորաբաժանումներ, վերանորոգող արհեստանոցներ և այլն, և այլն։ Այս բոլորը բերել, կենտրոնացրել էին սահմանի վրա և մերոնք ոչինչ, բացարձակապես ոչինչ չէին իմացել, – հայրս դառը ծիծաղեց, – հեքիաթ են պատմում, ինչ է։ Ինձ համար շատ պարզ է, որ այստեղ էլ մեզ ճշմարտությունը չեն ասում։

Տարիներ են անցել մեր տան այդ վեճից հետո, և տարիների հետ անընդհատ անդրադառնում եմ այդ հարցին։ Իսկապես, ինչո՞ւ ամեն ինչ ճիշտ չէր ասվում, եթե ոչ մեզ, շարքայիններիս, գոնե մյուսներին, այսպես ասած «ընտրյալներին»։ Չէ՞ որ այդ դեպքում շատ բան չէր լինի այնպես վատ, ինչպես եղավ...

* * *

Գործողությունների մեր պլանը մշակել էինք ամենայն խնամքով և պահում էինք խորապես գաղտնի։ Նույնիսկ մենք՝ ես և Վարդգես Պետրոսյանը (այժմ՝ «Գարուն» ամսագրի խմբագիր), երբ կարիք էինք զգում քննարկել ինչ-որ հարցեր կամ մանրամասներ, խոսում էինք շշուկով, զգուշության համար անընդհատ աջ ու ձախ նայելով և անպայման մարդկանցից հեռու մի վայրում։ Մեր պլանը շատ էլ բարդ չէր. փախչում էինք ռազմաճակատ՝ գործող բանակի շարքերում գերմանացիների դեմ կռվելու համար։ Իսկ որովհետև գերմանացիները առանձնապես ակտիվ էին Մոսկվայի ռազմաճակատում, մենք էլ մեկնելու էինք Մոսկվայի ռազմաճակատ։ Իհարկե «օրինական» ձևով ռազմաճակատ գնալը բացառվում էր. ես տասնմեկ տարեկան էի, իսկ Վարդգեսը՝ տաս։ Այդ պատճառով էլ խնամքով ճշտել էինք այն օրն ու ժամը, երբ Երևանի կայարանից պետք է մեկներ նորակոչիկների գնացքը։ Դասագրքից, տպագրվող զանազան ակնարկներից գիտեինք, որ այդ պահը ամենաերջանիկն է լինում

կայարանում։ Նորակոչիկները մեկնում են ուրախ ժպիտներով ու երջանկությունից ճառագող դեմքերով, ծնողները անսահման ու չթաքցված հպարտություն են ապրում իրենց քաջարի զավակների համար, աղջիկները՝ հերոսաբար կռվելու ու անհրաժեշտության դեպքում կյանքն անգամ «հայրենի զոհասեղանին դնելու» հորդորանքներ են տալիս իրենց սիրածներին։ Դպրոցում մենք նույնիսկ մի երգ էինք սովորել՝ «Մայրերս պարով ճամփա մեզ դրին, հայրերս ուրախ պարծանքով...»։ Այսպիսի համընդհանուր երջանկության ու խենթ ոգևորության պայմաններում և դրանից օգտվելով, մենք պետք է խցկվեինք վագոններից մեկը և նորակոչիկների հետ ճանապարհ ընկնեինք։

Բայց երբ հասանք կայարան...

Սուգ ու շիվան էր, ողբ ու կական էր մեր կայարանում։ Աղեկտուր լալիս էին բոլորը, լալիս էին իրենք՝ նորակոչիկները։ «Վիզս զարկում ես, բալա ջան, մեջքս կոտրում ես, բալա ջան» մոկտում էր տարեց մի կին՝ փաթաթված մի երիտասարդի պարանոցի։ «Չեմ թողնի, չեմ թողնի, մեկը գյուլլախորով եղավ, էս մեկին չեմ թողնի» մոլեգին կատաղությամբ գոռում էր մի կին, դողացող ձեռքերի ամբողջ ուժով կրծքին սեղմելով որդուն։ «Ախպեր ջան, իմ թագավոր ախպեր ջան» հեծեծալով մեր կողքին նվաղում էր մանկամարդ մի աղջիկ։

Տեսարանն այնքան ցնցող էր, զարհուրելի, սահմռկեցուցիչ և կարևորը՝ այնքան հակընդդեմ մեր պատկերացրածին ու կարդացածին, որ մենք ոչ միայն մոռացանք ռազմաճակատ մեկնելու մեր մտադրությունը, այլև մի կողմ քաշվելով՝ սկսեցինք ամբողջ ուժով լաց լինել...

Պատերազմի ժամանակ կայարանը մեր քաղաքի երևի ամենատխուր վայրն էր։

* * *

Այսպիսի տխուր հուշեր ես շատ կարող եմ պատմել։ Այսպիսի հուշեր կարող են պատմել իմ տարեկիցներից շատերը։

Առանձին և ուրիշ պատմելիք է, թե ինչպես այդ տխուր հուշերի մեջ կամաց-կամաց ուրախության երանգներ խառնվեցին, և ինչպես եկավ այն բաղձալի, այն անձկալի օրը, երբ «Մեր փողոցում էլ տոն եղավ»։ Դա մայիսի 9-ին էր։

Հունիսի 22-ից մինչև մայիսի 9-ը ընկած ժամանակահատվածում հինգ երկար ու ձիգ տարիներ են ընկած՝ հինգ ծանր, դժվարություններով, մահերով, զրկանքներով, արյուն-ավերով լի տարիներ։ Քանիսները գնացին՝ գալու համար, բայց չվերադարձան, իսկ մնացածներից էլ՝ քանիսները հետագայում, արդեն խաղաղ ժամանակ, հանկարծամահ եղան, մահացան տարբեր հիվանդություններից, գերհոգնածությունից, որովհետև այդ հինգ սարսափելի տարիների ընթացքում նրանք արդեն սպառել, արդեն «քամել» էին իրենց...

Բայց նրանք, որոնք այսօր մեր կողքին չեն, խստագույնս մեզ պատգամեցին անել ամեն ինչ, որպեսզի աշխարհի վրա իր սառը շնչով նորից չհայտնվի մի նոր հունիսի 22, որ նորից չխեղվի մեր կյանքը, որ նորերը, մեր հիանալի ու հիասքանչ նորերը պատերազմի մասին իմանան միայն կինոնկարներից ու գրքերից, որպեսզի նրանք երբեք ծանոթ չլինեն «Սև թուղթ», «Հացի գրքույկ», «Զոհվածի ընտանիք», «Միայնակ մայր», «Անհետ կորած», «Պատերազմի հաշմանդամ» և նման սարսռեցուցիչ արտահայտություններին։

Սա է մեր նահատակների պատգամը։ Եվ մենք անարժան ժառանգ լինելու խայտառակ խարանը կվաստակենք մեր ճակատին, եթե չկատարենք նրանց սուրբ պատգամը...

Երեկոյան Երևան, 1972, № 232